

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրության պայմանագրի կնքման իրավական կարգավորումը *

Վահագն Քեռյան

Բանալի բառեր՝ ապահովագրություն, պայմանագիր, իրավական կարգավորում, քաղաքացիական օրենսգիրք, ապահովագրող, ՀՀ օրենսդրություն:

Իրավագիտության մեջ ապահովագրության քաղաքացիաիրավական կարգավորման թեմայի ուսումնասիրության արդիականությունը և հրատապությունը բխում է մի շարք օբյեկտիվ համգամանքներից: Այսօր դժվար է պատկերացնել քաղաքացիների և տնտեսավարողների գործունեությունը առանց ապահովագրության, որն ընդգրկել է գույքային և տնտեսական հարաբերությունների բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից 28 տարի անց ապահովագրական հարաբերությունների իրավական կարգավորման դաշտը, համեմատած անկախության առաջին տարիների շրջանի հետ, գտնվում է անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա: Սակայն օբյեկտիվության համար անհրաժեշտ է նշել, որ մենք դեռևս չենք կարող այս ոլորտի մասին խոսելիս համեմատվել եվրոպական մի շարք պետությունների՝ մասնավորապես Մեծ Բրիտանիայի առկա ապահովագրական հարաբերությունների կարգավորման մակարդակի հետ:

Ապահովագրության պայմանագրին անդրադառնալիս նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ ապահովագրության պայմանագրի կնքման և դրա կապակցությամբ պայմանագրի ուժի մեջ մտնելու հիմնահարցերը: Առաջին հերթին պետք է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 996-ի 2-րդ կետով հստակ սահմանված է, որ ապահովագրության պայմանագիրը կնքվում է **գրավոր**, իսկ գրավոր ձևը չպահպանելը հանգեցնում է ապահովագրության պայմանագրի անվավերության և նման պայմանագիրն առ ոչինչ է:

Եթե ապահովագրության պայմանագրի կնքման ձևի հարցում ամեն ինչ հստակ է, ապա նույնը չի կարելի ասել պայմանագրի ուժի մեջ մտնելու հարցի վերաբերյալ: Իրավաբանական գրականությունում մինչ օրս չկա միատեսակ մոտեցում ապահովագրության պայմանագրի ռեալության կամ կոնսենսուալության վերաբերյալ: Մասնավորապես, ռուսաստանյան գրականությունում կարելի է հանդիպել տվյալ հարցի վերաբերյալ երկու առավել տարածված տեսակետի: Առաջին տեսակետն այն է, որ ապահովագրության պայմանագիրը հանդիսանում է ռեալ, եթե կողմերը իրենց համաձայնությամբ չեն սահմանել դրա կոնսենսուալությունը^[1]: Նման տեսակետի կողմնակիցները հղում են կատարում ՌԴ քաղաքացիական օրենսգրքի հոդված 957-ի առաջին կետին, որի ձևակերպումից բխում է, որ ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում առաջին ապահովագրավճարի իրականացման պահից, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով: Մյուս տեսակետի կողմնակիցները պնդում են, որ ապահովագրության պայմանագիրը միշտ կոնսենսուալ է և կողմերի իրավունքները և պարտականությունները առաջանում են պայմանագրի կնքման պահից՝ անկախ առաջին ապահովագրավճարի մուծման համգամանքից^[2]:

ՀՀ օրենսդրությունում տվյալ հարցի վերաբերյալ մոտեցումը հասկանալու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված

* Հոդվածն ընդունվել է 01.10.19:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ԵՊՀ պրոֆեսոր, ք.գ.դ. Տ. Քոչարյանը: 22.10.19:

1013-ի առաջին կետին, որը սահմանում է, որ «Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: Պայմանագրով կարող է նախատեսվել, որ ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում ապահովագրի կողմից ապահովագրավճարն ամբողջությամբ կամ պայմանագրով նախատեսված չափով վճարելու պահից:»

Ըստ ի.գ.թ Արմեն Հայկյանի՝ նման ձևակերպմամբ օրենսդիրը նախապատվություն է տալիս ապահովագրության պայմանագրի ռեալ տարբերակին[3]: Սակայն մեր կարծիքով նախապատվության որևէ դրսևորում տվյալ կարգավորման մեջ առկա չէ, ինչը ամբողջովին արդարացված է, քանի որ այն հնարավորություն է ընձեռում կողմերին, ելնելով իրենց սեփական շահերից, ընտրել պայմանագրի ռեալ կամ կոնսենսուալ լինելը՝ առանց տվյալ հարցի վերաբերյալ անտեղի օրենսդրական սահմանափակումների:

Ապահովագրության պայմանագրի կնքման կապակցությամբ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև մեկ այլ հարցի, որը չնայած իր մեծ գործնական նշանակությանը, գրեթե չի հանդիպում հայկական և ռուսական իրավաբանական գրականությունում: Խոսքը վերաբերվում է ապահովագրության պայմանագրի կնքման հնարավորությանը ապահովագրողի առաջարկի ընդունմանն ուղղված համապատասխան գործողությունների կատարման եղանակով: Պայմանագրի կնքման նման եղանակի հնարավորությունը բխում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 450-ից:

Բավականին հետաքրքիր է տվյալ հարցի վերաբերյալ ՌԴ դատական պրակտիկան: Մասնավորապես, 2007 թ. ՌԴ դատարաններից մեկում քննվում էր տվյալ հարցին առնչվող գործ: Տվյալ գործում ապահովագիրը ապահովագրողին ներկայացրել էր ապահովագրվելու ցանկություն արտահայտող դիմում, իսկ ապահովագրողը նրան ներկայացրել էր համապատասխան հաշիվ՝ ապահովագրավճարի մուծման վերաբերյալ, որը ապահովագիրը ամբողջովին վճարել էր: Ապահովագրության վկայագիր կամ վկայագիրը փոխարինող այլ փաստաթուղթ ապահովագրողը ապահովագրին դրա արդյունքում տրամադրած չէր եղել [4]: Առաջին երկու ատյանների դատարանները ընդունեցին այն հանգամանքը, որ ապահովագրության պայմանագրի կնքումը առկա է գրավոր օֆերտան ակցեպտավորելու ուղղությամբ կատարված գործողությունների ուժով: Սակայն վճարեկ ատյանում դատարանը եկավ բավականին հետաքրքիր և վիճելի եզրակացության, ինչի բովանդակությունը հետևյալն է. ապահովագրության պայմանագրի դեպքում ապահովագրողը չի կարող օֆերտայով դիմել ապահովագրին, քանի որ օֆերտան պետք է պարունակի պայմանագրի բոլոր էական պայմանների վերաբերյալ տեղեկություններ, ինչը ապահովագրության պարագայում հնարավոր չէ: Այս ձևակերպման մեջ դատարանը ի նկատի ուներ այն հանգամանքը, որ ապահովագրողը միայն ապահովագրի կողմից տրամադրվելիք տեղեկությունների հիման վրա կարող է հստակ և գրագետ ձևով գնահատել ապահովագրության առնվելիք ռիսկը, և դրա կապակցությամբ սահմանել իր կողմից ծառայությունների մատուցման հնարավորությունը և պայմանագրի էական պայմանները: Տեսականորեն տվյալ եզրահանգումը բավականին վիճելի է, քանի որ սկզբունքորեն ոչինչ չի խանգարում ապահովագրողին ցանկացած օրինական պայմաններով պայմանագիր առաջարկելու, իսկ ապահովագրին՝ համաձայնելու դրանց հետ: Սակայն գործնականում ապահովագրողը հազվադեպ դեպքերում կգնա նման քայլի, քանի որ նրա համար անհնարին կլինի ռիսկի գրագետ գնահատումը և դրա հիման վրա ապահովագրավճարների ճիշտ սահմանումը:

Զնայած վերոնշյալ բոլոր հանգամանքներին, որոնք կարծես թե վերացնում են «դիմում - պոլիս - պոլիսի ընդունում» (պոլիս հասկացության տակ տվյալ դեպքում ի նկատի ունենք վկայագիրը) մեխանիզմով գործնականում ապահովագրության պայմանագրերի կնքումը, նման մեխանիզմով ապահովագրության պայմանագրերի

կնքման պրակտիկա ոչ միայն առկա է, այլ նաև բավականին մեծ տարածում ունի ապահովագրության առանձին տեսակների և դասերի գծով:

Ապահովագրության պայմանագրերի կնքման տվյալ մեխանիզմի կիրառությունը գործնականում հնարավոր է դարձնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 999-ի առաջին կետը, որը սահմանում է՝ «Պայմանները, որոնցով կնքվում է ապահովագրության պայմանագիրը, կարող են որոշվել ապահովագրողի կամ ապահովագրողների միության ընդունած կամ հաստատած ապահովագրության համապատասխան տեսակի, դասի համար սահմանված ստանդարտ պայմաններով (ապահովագրության ընդհանուր պայմաններ): Եթե ապահովագրության պայմանագիրը կնքվել է ապահովագրողի կամ ապահովագրական միությունների կողմից հաստատված ապահովագրության պայմանագրի ընդհանուր պայմանների հիման վրա, ապա ապահովագրության պայմանագիրը պետք է հղում պարունակի այդ պայմաններին:»

Վերոնշյալ կարգավորումը հնարավորություն է տալիս ապահովագրողներին ստանդարտացնել իրենց կողմից կնքվող ապահովագրական պայմանագրերը: Նման կարգավորման առկայությունը բխում է օբյեկտիվ անհրաժեշտությունից: Ցանկացած ակտիվ գործունեություն վարող ապահովագրական ընկերություն ունի բազմաթիվ հաճախորդներ և եթե նրանցից յուրաքանչյուրի հետ կազմակերպությունը գնար անհատական պայմանագրի կնքման, կազմակերպության համար կառաջանային մի շարք անհատական ռիսկեր, ինչը անհնարին կդարձներ կազմակերպության արդյունավետ գործունեությունը:

Ապահովագրության պայմանագրերի ստանդարտացումը հնարավորություն է ընձեռում ապահովագրողներին կանխատեսելու պայմանագրերի կնքման կապակցությամբ առաջացող ռիսկերի շրջանակը և հստակ պրակտիկա ձևավորել դրանց հետ աշխատելու համար: Ճիշտ է, չկա որևէ արգելող հանգամանք կողմերի համար կնքելու լիովին յուրահատուկ պայմանագիր, եթե լինի դրա վերաբերյալ համաձայնությունը, սակայն առավել տարածված են ստանդարտացված պայմանագրերը: Նման պայմանագրերի կնքման գործընթացն սկսվում է ապահովագրողի կողմից համապատասխան դիմումի ներկայացումով, որից հետո ապահովագիրը, հիմնվելով նախապես սահմանված ստանդարտ պայմանների վրա իրականացնում է համապատասխան ձևակերպումները (այդ թվում նաև ապահովագրավճարի վերաբերյալ) և տրամադրում է ապահովագրին պոլիսը (վկայագիրը), իսկ ապահովագիրը, եթե համաձայն է պայմաններին, ընդունում է այն: Այս գործընթացը մշակված է միջազգային ապահովագրական պրակտիկայի կողմից և բավականին լայն տարածում ունի[5]:

Ամփոփելով վերոնշյալ բոլոր հանգամանքները՝ կարող ենք ասել, որ ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել մեկ փաստաթուղթ կազմելու կամ ապահովագրողի կողմից ապահովագրին, նրա գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա ապահովագրական պոլիս հանձնելու միջոցով: Ապահովագրողի առաջարկած պայմաններով պայմանագիր կնքելը հավաստում է վերոնշյալ փաստաթուղթն ապահովագրողից ընդունելով[6]:

Ինչպես արդեն նշեցինք, ապահովագրության պայմանագիրը կարող է ուժի մեջ մտնել դրա կնքման պահից հետո: Որպես կանոն պրակտիկայում առավել հաճախ են հանդիպում պայմանագրերը, որոնք ուժի մեջ են մտնում ապահովագրավճարի (ամբողջությամբ կամ դրա մի մասի) մուծման պահից: Սակայն հնարավոր են դեպքեր, երբ պայմանագրով նախատեսվի դրա գործողության սկիզբը նախատեսված ժամկետից հետո՝ անկախ ապահովագրավճարի մուծման փաստից:

Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի հարցը կարևորագույն գործնական նշանակություն ունի, քանի որ ապահովագրության պայմանագիրը տարածվում է միայն ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետում տեղի ունեցած ապահովագրական դեպքերի վրա (հոդված 1013, 2-րդ կետ): Տվյալ խնդրի

հետ կապված պրակտիկայում առկա է խնդիր՝ կապված ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակավոր դադարեցման հնարավորության հետ: Այս խնդիրն առաջացել է, քանի որ կային դեպքեր, երբ ապահովագրավճարների տարածամկետ վճարում նախատեսող պայմանագրերով առանձին ապահովագրողներ նախատեսել էին նաև պայման, ըստ որի՝ ապահովագրավճարի հերթական մուծման ուշացումը հանգեցնում է ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակավոր դադարեցման, և դրա գործողությունը վերականգնվում է մուծումը կատարելու դեպքում: Այդպիսի դեպքերը մեծ տարածում ունեին հատկապես ՌԴ-ում[1]: Չնայած նման պրակտիկայի փաստացի կիրառմանը՝ ռԶ ՌԴ, և ռԶ էլ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակավոր դադարեցման հնարավորություն նախատեսված չէ, այլ խոսվում է միայն պայմանագրի վաղաժամկետ դադարեցման և դրա արդյունքում առաջացող իրավական հետևանքների մասին: Այդ իսկ պատճառով առկա օրենսդրության պայմաններում նման պայմանի նախատեսումը ապահովագրության պայմանագրում իրավաչափ չի կարող համարվել, իսկ ռուսաստանյան դատական պրակտիկայում նման դեպքերով գործերի քննության ընթացքում դատարանները, որպես կանոն, պայմանագրի տվյալ պայմանը դիտում էին որպես իրավական ուժ չունեցող:

Չնայած վերոնշյալ հանգամանքներին՝ իմ կարծիքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նման հնարավորության նախատեսումը անհրաժեշտ է, քանի որ դա հնարավորություն կտա կողմերին, համաձայնության առկայության դեպքում, առանց իրենց միջև արդեն իսկ առկա պայմանագիրը դադարեցնելու, ժամանակավորապես կասեցնել դրա գործողությունը, մինչև կողմի՝ պայմանագրում նախատեսված պարտավորության իրականացումը:

Ապահովագրության պայմանագրի դադարեցումը առաջացնում է կողմերի միջև փոխադարձ իրավունքների և պարտականությունների դադարեցում: Ապահովագրության պայմանագրի դադարեցման առավել տարածված հիմքերից է պայմանագրի գործողության ժամկետի ավարտը և դրա կապակցությամբ կողմերի միջև առկա հարաբերությունների դադարեցումը: Բացի պայմանագրի դադարեցումից դրա գործողության ժամկետի ավարտի փաստով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1014-ը նախատեսում է նաև ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հնարավորությունը: Վերոնշյալ հոդվածի առաջին կետով, որպես ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմք, նախատեսված է ապահովագրական պատահարի վրա հասնելու հնարավորության վերացումը: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ վերացել է վտանգի (պատահարի) առաջացման ռիսկը, որի կապակցությամբ իրականացվել է ապահովագրությունը:

Որպես օրինակ կարող ենք բերել ՌԴ Մոսկվայի շրջանի դատարանի կողմից քննված հետևյալ գործը՝ ձեռնարկությունը կնքել էր դժբախտ պատահարներից կոլեկտիվ ապահովագրության պայմանագիր՝ իր արտադրական գործունեություն իրականացնող աշխատակիցների օգտին՝ վճարելով ապահովագրավճարը բոլոր աշխատակիցների համար: Սակայն պայմանագրի գործողության ընթացքում որոշ աշխատակիցներ հեռացվել էին աշխատանքից և ձեռնարկությունը իրավացիորեն գտել էր, որ ապահովագրության պայմանագիրը տվյալ անձանց նկատմամբ դադարել է՝ աշխատանքից դուրս գալու ուժով: Տվյալ դեպքում, չնայած նրան, որ դժբախտ պատահարների առաջացման ռիսկը արտադրամասում դեռևս առկա էր, այն աշխատանքից դուրս գալու պահից վերացել էր նախկին աշխատակիցների համար, այդ իսկ պատճառով դատարանը բավարարեց ապահովագրողից տվյալ աշխատակիցների գծով մուծված ապահովագրավճարների մի մասի բռնազանձման պահանջը: [8]:

Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը հնարավոր է նաև ցանկացած պահի՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ: Բացի կողմերի փո-

խաղարժ համաձայնությամբ պայմանագրի դադարեցման դեպքերի՝ հոդված 1014-ով նախատեսված են նաև այն դեպքերը, երբ հնարավոր է պայմանագրի միակողմանի դադարեցումը: Մասնավորապես, ապահովադիրն իրավունք ունի միակողմանի լուծելու պայմանագիրը՝ այդ մասին առնվազն քսանհինգ օր առաջ ծանուցելով ապահովագրողին:

Պրակտիկայում առկա է բավականին հետաքրքիր գործ, որում ապահովադիրը ապահովագրողին նամակ էր ուղարկել՝ պայմանագիրը լուծելու խնդրանքով, որին ապահովադիրը չէր պատասխանել: Սակայն ապահովագրական պատահարի առաջանալուց հետո, ապահովադիրը վկայակոչել է տվյալ նամակը, որպես ապահովադրի կողմից միակողմանի պայմանագրի դադարեցում: Դատարանը տվյալ նամակը որակեց ոչ թե որպես պայմանագրից հրաժարում, այլ կողմերի համաձայնությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու առաջարկ, ինչը տեղի չէր ունեցել[9]: Այսինքն՝ կարող ենք հետևություն անել, որ ապահովադրի կողմից պայմանագրի դադարեցումը պետք է հստակ և սպառիչ կերպով ձևակերպված լինի, այդպիսին համարվելու համար:

Բացի ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերոնշյալ հիմքերից՝ հոդված 1014-ի 4-րդ կետը նախատեսում է նաև, որ «ապահովագրության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ, եթե մյուս կողմը թույլ է տվել ապահովագրության պայմանագրի էական խախտում՝ խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում»: Միաժամանակ վերոնշյալ հոդվածի 7-րդ կետով նախատեսվում են որոշակի սահմանափակումներ ապահովագրողի համար՝ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման կապակցությամբ: Խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ՝

1. ապահովագրողը գիտեր կամ կարող էր իմանալ, որ պայմանագրի կնքման պահին ապահովադրի կողմից ներկայացվել են ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ,
2. ապահովադրի կողմից ապահովագրության պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը կատարվել է ոչ իր մեղքով:

Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը առաջացնում է մի շարք իրավական հետևանքներ: Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման իրավական հետևանքներից կարևորագույնը կողմերի պարտավորությունների դադարեցումն է: Մասնավորապես, դադարում է ապահովադրի պարտականությունը՝ վճարելու պայմանագրով սահմանված ապահովագրավճարը և ապահովագրողի պարտականությունը՝ ապահովագրական պատահարի վրա հասնելու կապակցությամբ տրամադրելու ապահովագրական հատուցում: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ պայմանագրի դադարեցմամբ կողմերի միջև իրավունքների և պարտականությունների դադարեցման հետ մեկտեղ պահպանվում են առանձին իրավունքներ, որոնք հստակ նախատեսված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 1014-ում: Անդրադառնալով դրանցից մի քանիսին:

Այսպես՝ իր կողմից պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում ապահովադիրն իրավունք է վերապահվում ստանալու՝

1. ոչ կյանքի և կյանքի ռիսկային ապահովագրության դեպքում՝ պայմանագրի գործողության մնացած ժամկետի համար ապահովագրավճարները.
2. կյանքի ապահովագրության դեպքում՝ ապահովադրի կողմից վճարված ապահովագրավճարները, այլ հատուցումները, եթե այդպիսիք նախատեսված են ապահովագրության պայմանագրով, որից նվազեցվում են ապահովագրության պայմանագրի կնքման և կատարման ծախսերը: (հոդված 1014, 3-րդ կետ)

Ապահովագրողի կողմից պայմանագրի խախտման հետևանքով ապահովադրի նախաձեռնությամբ պայմանագրի դադարեցման դեպքում իրավունք է վերապահվում

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2019

պահանջելու նաև պայմանագրի գործողության ընթացքում իր կողմից վճարված ապահովագրավճարների և ստացած ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը, իսկ օրենքով նախատեսված առանձին դեպքերում նաև իր կողմից վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ:

Այն դեպքերում երբ ապահովագրության պայմանագրի դադարեցումը տեղի է ունեցել ապահովագրողի նախաձեռնությամբ՝ ապահովագրի խախտման հետևանքով, ըստ 1014-րդ հոդվածի 6-րդ կետի, ապահովագրին չեն վերադարձվում ոչ կյանքի և կյանքի ռիսկային ապահովագրության ապահովագրավճարները: Իսկ կյանքի կուտակային ապահովագրության դեպքում ապահովագրի կողմից վճարված բոլոր ապահովագրավճարները վերադարձվում են, սակայն դրանցից նվազեցվում են վճարված ապահովագրական հատուցումները և պայմանագրի կնքման ու կատարման հետ կապված ծախսերը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես Смирнова М.Б. Страхование право, Учебное пособие, Москва, 2007, էջ 50:
2. Տես В.В.Шахова, Страхование, Москва, 2009, էջ 37:
3. Տես Բարսեղյան Տ., Հայկյանց Ա., Ղարախանյան Գ., Մեղրյան Ս., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք (երկրորդ մաս), Երևան, 2001, էջ 532:
4. Տես Постановление ФАС Северо Западного округа от 18 сентября 2007 г.№ А13 11864/2006:
5. Տես Ю.Б. Фогельсон, Страхование право. Теоретические основы и практика применения, Москва, 2012г., էջ 203:
6. Տես Բարսեղյան Տ., Հայկյանց Ա., Ղարախանյան Գ., Մեղրյան Ս., նշվ. աշխ. էջ 535:
7. Տես А.В.Кашин, М.П. Кушарова, Страхование право, Новосибирск, 2014г., էջ 86:
8. Տես Постановление ФАС Московского округа от 12 марта 2009 г. № КГ А41/122409:
9. Տես Постановление ФАС Северо Западного округа от 23 мая 2006 г.№ А5640265/2005:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ապահովագրության պայմանագրի կնքման իրավական կարգավորումը Վահագն Քեռյան

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական հարաբերությունների իրավական կարգավորման դաշտը, անկախության առաջին տարիների շրջանի համեմատությամբ, գտնվում է անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածները հստակ սահմանում են ապահովագրության պայմանագրի կնքման հետ կապված կողմերի իրավասությունները: Հստակեցված է ապահովագրության պայմանագրի դադարեցման ժամանակ կողմերի միջև փոխադարձ իրավունքների և պարտականությունների դադարեցման իրավական գործընթացը:

РЕЗЮМЕ

**Правовое регулирование заключения договора страхования
Ваагн Керян**

Ключевые слова: страхование, договор, правовое регулирование, гражданский кодекс, страховщик, законодательство РА.

По сравнению с первыми годами независимости правовое регулирование страховых отношений в Республике Армения несравнимо выше. Соответствующие статьи Гражданского кодекса РА четко определяют компетенцию сторон, связанную с заключением договора страхования. Разъяснен правовой процесс прекращения взаимных прав и обязанностей сторон в момент расторжения договора страхования.

SUMMARY

**Legal Regulation of the Conclusion of an Insurance Contract
Vahagn Keryan**

Keywords: insurance, contract, legal regulation, civil code, insurer, RA legislation.

Compared to the first years of independence, the legal regulation of insurance relations in the Republic of Armenia is incomparably higher. The relevant articles of the Civil Code of the Republic of Armenia clearly define the competence of the parties related to the conclusion of an insurance contract. The legal process of termination of the mutual rights and obligations of the parties at the time of termination of the insurance contract is clarified.